«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1 «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-207-Ն օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Պետական մարմնի ղեկավարի հայեցողությամբ իր բացակայության դեպքում նրան փոխարինում է տեղակալը, ինչի մասին նշում է կատարվում բացակայության հիմքը սահմանելու մասին իրավական ակտում:

Պետական կառավարման մարմնի ղեկավարի լիազորությունների կատարման անհնարինության, ինչպես նաև հրաժարականի հիմքով ազատման դեպքում մինչև նոր ղեկավարի նշանակումը նրան վարչապետի որոշմամբ փոխարինում է տեղակալը:»:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Ենթակա պետական մարմնի ղեկավարի հայեցողությամբ իր բացակայության դեպքում նրան փոխարինում է տեղակալը, ինչի մասին նշում է կատարվում բացակայության հիմքը սահմանելու մասին իրավական ակտում:

Ենթակա պետական մարմնի ղեկավարի լիազորությունների կատարման անհնարինության, ինչպես նաև հրաժարականի հիմքով ազատման դեպքում մինչև նոր ղեկավարի նշանակումը նրան վարչապետի որոշմամբ փոխարինում է տեղակալը։։

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի 1-ին հավելվածում՝

1) հանել նախարարի առաջին տեղակալ 10.00, Ազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ 10.00, Ոստիկանության պետի առաջին տեղակալ 10.00, Պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ 10.00, « ԶՈՒ գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ 10.00», ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալ 8.50, Կառավարությանն ենթակա մարմնի ղեկավարի առաջին տեղակալ 8.00 տողերը.

2) Նախարարություններ բաժնից հանել նախարարի առաջին տեղակալի օգնական 4.50 տողը։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

<<ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետից հանել «քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալ,» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: